

ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏՆԱԳԱՐԱՆԻ ԿԱՐՄԻՔԸ

ՀԻՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼԸ ԱՆՈՒՂՂԵԼԻ ՍԽԱԼ ԿԼԻՆԻ
ՄԵՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՍԱՐ

Վերջին տարիներին Մատենադարանի հրկու աշխատակիցներ (ոչ լեզվաբաններ) պարբերաբար հանդես են եկել ներկա ուղղագրությունն անհապաղ փոխելու, հին ուղղագրությանն անցնելու առաջարկությամբ: Սակայն դա Մատենադարանի կարծիքը չէ, և հակասում է ուղղագրության հարցում Մատենադարանի սկզբունքային, պաշտոնական տեսակետին: Մեր գիտնականները գտնում են, որ ներկա ուղղագրությունը հրաշալի կատարում է իր դերը և նրանից հրաժարվելն ոչ հնին անցնելը անուղղելի սխալ կլինի հայ մշակույթի համար:

Ինուս 1991 թ. մայիսի 6-ին, արտահայտելով Մատենադարանի գիտնականների մեծամասնության կարծիքը, մի քանի աշխատակիցներ (Արտաշես Մարտիրոսյանը, Վաթեհան Իրիգորյանը, Հրազարդ Հակոբյանը և Շուշանիկ Նազարյանը) «Հայաստան» թերթում հանդես եկան հայտարարությամբ՝ «Իսկականը դասականին» վերնագրով, որի տակ իրենց ստորագրությունները դրեցին նաև անվանի գիտնականներ՝ Մանվել Ասատրյանը, Հովհաննես Բարսեղյանը, Վազգեն Գաբրիելյանը, Գևորգ Տիրացյանը, Հրանտ Թամրազյանը, Սարգիս Հարությունյանը, Արտաշես Նազինյանը, Ալբերտ Շարուրյանը և ուրիշներ՝ 11 հոգի: Հայտարարության մեջ ասվում է, որ գրաբարյան ուղղագրությունը կապված է այդ լեզվի հետ, ելնում է նրա օրինաչափություններից և եթե ուղում ենք վերադառնալ նրան, ապա պետք է վերադառնանք այդ լեզվին: Այն փաստարկը, որ անցնելով դասական ուղղագրությունը, մենք կմոտեցենք արևմտահայ և արևելահայ գրական լեզուները, որն է հիմք չունի, քանի որ ուղղագրությունը մեծապես ելնում է լեզվի հնչակարգից, իսկ արևմտահայերենը և արևելահայերենը տարբեր հնչակարգ ունեն, և այդ տարբերությունն առաջացել է դասական ուղղագրության պայմաններում: Հայտարարության հեղինակները վճռականորեն դեմ էին ներկա ուղղագրությունը փոխելու առաջարկություններին:

Չնայած դրան, այն կարծիքն է տարածվել, թե Մատենադարանի գիտնականները կողմ են ուղղագրության փոփոխմանը: 1997 թ. դեկտեմբերի 12-ին «Հայաստանի Հանրապետություն» թերթի մեջ սփյուռքահայ մի հնդինակ (Ս. Հովիվյան) «Ժամանակն է, որ վերադառնանք ազգային ուղղության» հոդվածի մեջ իր կարծիքն ավելի ամրապնդելու համար վկայակոչում է Մատենադարանի աշխատակիցներին, որոնք իբր «չենք պաշտպաններն են» այդ փոփոխության:

Դա մեծ վրդովմունք առաջացրեց Մատենադարանում: Մեր հանձնարարությամբ «Հայաստանի Հանրապետություն» թերթում պատասխան հոդվածով հանդես եկավ Մատենադարանի Հին ձեռագրերի ուսումնասիրության և հրապարակման բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր Արտաշես Մարտիրոսյանը, որը համոզիչ կերպով ցույց տվեց Ս. Հովիվյանի «փաստարկներին» անհիմն լինելը և վկայեց, որ Մատենադարանը դեմ է ժամանակակից լեզվի համար գրաբարյան ուղղագրությունը երաճելուն:

Հայաստանի Հանրապետություն» թերթը, որը համառոտորեն շարունակում է իր անունը դրել հին ուղղագրությամբ, Ա. Մարտիրոսյանի հոգովածի վրա գրեց «մասնավոր կարծիք» վերադասությունը՝ ցույց տալով իր ոչ անաշուտ վերաբերմունքն այդ խնդրին: Նույն թերթում մեկ այլ հեղինակ՝ լրագրող Հրաչյա Մաթևոսյանը, «Մեր լեզուն մենք ենք, մենք մեր լեզուն ենք» հոդվածում, տուանց որևէ հիմքի, մատենադարանցիներին դրել է հին ուղղագրությունը ժամանակակից լեզվի համար կիրառման պաշտպանների դիրքերում:

Ստիպված ենք կրկին հայտարարել, որ Մատենադարանի գիտնականների կարծիքով արեւելահայերենի արդի ուղղագրությունը միանգամայն բավարարում է մեր լեզվի պահանջները և հնին անցնելը ոչ մի ձևով արդարացին չի կարելի: Լեզուն անհատական կամ հասարակական հորինվածք չէ և ոչ ստեղծագործություն, լեզուն ազգային արարչություն է և չի կարելի ամեն անգամ թեթևորեն խաղալ նրա հետ: Նոր ռեֆորմով մենք մի քանի սերունդ կգատապարտենք անգրագիտության և մարդկանց մոտ կառաջանա անվստահություն և խորթություն մայրենի լեզվի նկատմամբ: Եվ մի՞թե այսօր առաջին խնդիրն է դա: Դրանով մենք չենք շեղում մեր ուղղագրությունը այլ կարևոր հարցերից: Եթե փոխվի ուղղագրությունը, անմիջապես կառաջանա անգրագիտների մի սերունդ, որի վրա փաստորեն դրվելու է մեր անկախությունը պաշտպանելու, արդյունաբերությունը, պրոդակտիվությունը վերականգնելու պարտականությունը: Տգեղանքով ու անգրագիտներով պետք է զարգացնենք մեր երկիրը:

Այսօր մեր դպրոցը, ուսումնական ողջ համակարգը անկում են ապրում, ուղղակի կազմալուծված են, և երբ շունենք կայուն, առողջ դպրոց, իսկ պետական բյուջեն էլ ցամաքել է, ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով պետք է իրականացնել նման, ոչնչով չարդարացված, անասելի համարձակ ու անիմաստ քայլը: Առավել ևս, երբ ունենք կատարելագործված, մշակված, դյուրությամբ յուրացվող ուղղագրություն, որն իրեն լիովին արդարացրել է:

Մաշտոցի անվան Մատենադարանի աշխատակիցներս, որ ամենօրյա շփման մեջ ենք գրաբարյան ուղղագրության հետ, լավ դիտենք նրա արժեքը, նրա վիթխարի դերը մեր դասական լեզվի և դրականության զարգացման գործում: Բայց մենք գիտենք նաև, որ դեռևս միջնադարում, լեզվի բնականոն փոփոխությանը զուգընթաց, միջին հայերենի և աշխարհաբարի տարածման պայմաններում հայ հեղինակների կողմից բազմաթիվ փորձեր են կատարվել հայերենի փոփոխված հնչակարգը արտացոլել նաև ուղղագրության մեջ: Գտնում ենք, որ ուղղագրական ռեֆորմը չպետք է կապել քաղաքական դրդապատճառների հետ: Դա նախախորհրդային շրջանի տասնյակ տարիներ տևած բանավեճների, առաջարկությունների և մտահոգության արդյունք է, որը հասունացած էր և գործադրվեց Հայաստանի այն ժամանակվա կառավարության կողմից՝ մեծապես նպաստելով լեզվի ու գրականության զարգացմանը, անգրագիտության վերացմանը: Այդ նոր, դյուրամատչի սկզբունքներով կազմված ուղղագրությամբ են կրթություն ստացել ժողովրդի լայն զանգվածները, իրենց գործերն են ստեղծել Եղիշ Զարենցը, Ակսել Բակունցը, Հովհաննես Շիրազը, Սիլվա Կապուտիկյանը, Պարույր Սևակը, Համո Սահյանը և բազմաթիվ այլ հայ բանաստեղծներ, գրողներ, գիտնականներ և մտավոր բնագավառի մի քանի սերունդներ՝ իրենց մեծ ավանդը մուծելով հայ մշակույթի ու գիտության զանազան ոլորտներ: Աշխարհաբար թարգմանությամբ, բարեփոխված ուղղագրությամբ, մեծ տպաքանակներով ժողովրդին է մատուցվել դասական ժառանգությունը՝ միջնադարյան հայ պատմիչների, փիլիսոփաների, բանաստեղծների գործերը: Նոր ուղղագրությունն ամենևին չի խանգարել հայ մշակույթի զարգացմանն ու հարստացմանը, ընդհակառակը, համատարած գրագիտության պայմաններում մեծապես նպաստել է վերելքին: Վերադարձը գրաբարյան ուղղագրության առաջացնելու է մեծ խառնաշփոթ հոգևոր կյանքի բոլոր ասպարեղներում:

Մատենադարանի գիտնականները, համերաշխություն հայտնելով հայ լեզվաբանության վաստակաշատ և ճանաչված մասնագետների, համալսարանական դասախոսների ուսուցիչների ու սթափ մտածող բազմահազար մտավորականների հետ, բացարձակապես անիմաստ են համարում գրաբարյան ուղղագրության կիրառումը ժամանակակից լեզվի համար:

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏՆԱԿԱՐԱՆԻ ՏՆՅՐԻՆՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆՔ ՄԱՏՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԾԻՔԸ

ՀՀ Գիտությունների Ազգային ակադեմիայի գրականության, Պատմության, Արվեստի, Արևելագիտության, Հնագիտության ու ազգագրության ինստիտուտների, «Պատմա-բանասիրական հանդեսի» և «Լրաբեր» պարբերականի աշխատակիցները պաշտպանում են Մաշտոցի անվ. Մատենադարանի աշխատակիցների տեսակետը հայերենի ուղղագրությունների մասին: Սանոթ լինելով վերջին տարիներին մամուլում ծավալված բանավեճերին, ականավոր լեզվագետներ, մտավորականների և ուսուցչության կարծիքներին մենք ես պատում ենք, որ ժամանակակից ուղղագրությունը միանգամայն բավարարում է մեր լեզվի պահանջները և հնին անցնելը անուղղելի սխալ կլինի մեր գիտության ու մշակույթի համար: Մենք այժմ ունենք կատարելագործված, մշակված և դյուրությամբ յուրացվող ուղղագրություն, որն իրեն լիովին արդարացրել է:

Նոր ուղղագրությունը առանձին անհատների նախաձեռնությամբ չէ, որ կյանքի է կոչվել, այլ եղել է պատմական անհրաժեշտություն՝ թելադրված հայոց լեզվի զարգացման ներքին օրինաչափություններով: Հարկ է նշել, որ նոր ուղղագրության դեմ ոտնձգությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ ամեն ինչ քանդել-ավերելու տխրահռչակ մոլուցքի դրսևորում, այս անգամ արդեն լեզվի ասպարեզում, որը պետք է վճռականորեն մերժվի:

Գրականության ինստիտուտի տնօրեն՝ ակադեմիկոս Է. Զրբաշյան

Պատմության ինստիտուտի տնօրեն՝ ակադեմիկոս Հ. Ավետիսյան

Արվեստի ինստիտուտի տնօրեն՝ ակադեմիկոս Լ. Հախվերյան

Արևելագիտության ինստիտուտի տնօրեն՝

պատմ. գիտ. դոկտոր

Ն. Հովհաննիսյան

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի

տնօրեն՝ պատմ. գիտ. դոկտոր

Ա. Քալանթարյան

ՊԲՀ-ի խմբագիր, ակադեմիկոս

Մ. Ներսիսյան

«Լրաբեր» խմբագիր, պատմ. գիտ. դոկտոր

Ա. Խառապյան

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՐԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԵՎ ԳԱ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

ՎԵՐՋ ՏԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՐԻՒ ՈՒՂՂԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԿԱՏԱՐԱՆՈՂ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Վերջին տարիներս որոշ մտավորականներ ու քաղաքական գործիչներ բուռն քարոզչություն են ծավալել մամուլում՝ ընդդեմ հայերենի արդի ուղղագրության, նրանց նպատակն է փոխել տալ նոր ուղղագրությունը և վերադառնալ հին՝ մինչև 1922 թ. գործող ուղղագրությանը:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առնթվելի պետական տեսչությունը հովանավորում է այս քարոզչությունը և իր հերթին գործնական քայլեր է ձեռնարկում ուղղագրական հետադարձ ռեֆորմն իրականացնելու ուղղությամբ՝ դա համարելով մինչևիսկ «օրենսդրական պահանջ»:

Այսօր հանրապետությունում շատ թերթեր առանձին հոդվածներ են տպագրում նաև հին ուղղագրությամբ. տպագրվում են նաև դրքեր ու գրքիկներ, Այս խառնակ վիճակը ծավալվում է ու խորանում:

Ինչպես հայտնի է, 1922 և 1940 թթ. կառավարական որոշումները ուղղագրության փոփոխության մասին ցայժմ ոչ մի իշխանության, բարձրագույն ոչ մի ատյանի կողմից չեղյալ չեն համարվել: Հետևաբար դրանք ունեն օրենքի ուժ:

Քաղաքակիրթ ոչ մի երկրում չի կարող մեկ նախադասություն իսկ գրվել ու տպագրվել այլ կերպ, քան պահանջում է պետականորեն հաստատված ուղղագրությունը:

Մինչդեռ այսօր Հայաստանի Հանրապետությունում դա սովորական իրողություն է, անգամ խրախուսվում է կառավարական մակարդակով:

Այս վիճակը չի կարող չանհանգստացնել հասարակական լայն զանգվածներին: Լեզվական այս սխալ քաղաքականության պատճառով հայաստանաբնակ ողջ ժողովուրդը, նախկին խորհրդային Միության նախկին հանրապետություններում բնակվող, այլև վերջին տարիներս Հայաստանից արտագաղթած շուրջ մեկ միլիոն արևելահայերը հետևողականորեն նպատակամղված կերպով հայտնվում են ուղղագրության տեսակետից թերարժեք վիճակում:

Այս մասին շատ է խոսվել ու գրվել:

Այս հարցերը կրկին լուրջ քննարկման նյութ դարձան ս.թ. ապրիլի 22-ին Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի Ծ. Չարենցի անվան դահլիճում բանասիրական ֆակուլտետի գիտխորհրդի և ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի կողմից կազմակերպված գիտաժողովում, որին հրավիրվել էին (մամուլով և ռադիոյով) բոլոր ցանկացողները: Ներկա էին ՀՀ կառավարությանն առնթվելի պետական տեսչության, հանրապետության բուհերի, դպրոցների, հիմնարկությունների աշխատակիցներ, ուսանողներ, մամուլի ներկայացուցիչներ:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս. Աբրահամյանը (լեզվաբանության ինստիտուտ), բանասիրական գիտությունների դոկտորներ, պրոֆեսորներ Վ. Գաբրիելյանը, Ալ. Մարգարյանը, Լ. Եզեկյանը, Արտ. Պապոյանը (Երևանի պետական համալսարան), Ա. Մարտիրոսյանը (մատենագրարան), բզթ, պրոֆեսոր Ա. Մա-

րությանը (մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի վարիչ), լրգթ Ֆ. Խղաթյանը (օտար լեզուների ինստիտուտի հայագիտության ամբիոնի վարիչ), մանկավարժ Հ. Նահատակյանը (էջմիածնի Ներսեսյան վարժարանի տնօրեն) և ուրիշներ իրենց ելույթներում գիտական լուրջ փաստարկումներով հիմնավորեցին գործող ուղղագրության պատմական անհրաժեշտությունը՝ որպես հայոց լեզվի զարգացման նոր փուլի դրսևորում, ընդգծեցին նրա արժանիքները, հատկապես լիակատար համապատասխանությունը արդի հայերենի հնչյունական համակարգին և հին ուղղագրությանը վերադառնալու անիմաստությունն ու անհնարինությունը:

Արդի ուղղագրությունը փոխելու և հին վերադառնալու կոչով հանդես եկան մաթեմատիկական գիտությունների թեկնածու Ա. Մաշուրյանը (լեզվի պետական տեսություն), բգթ Ջ. Միրզաբեկյանը (ճարտարագիտական համալսարան), արվեստագիտության թեկնածու Լ. Չուդասգյանը (ԵՊՀ հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ), լրգթ Գ. Տեր-Վարդանյանը (ազգային գրադարանի տնօրեն), որոնց ելույթները, շունենալով լեզվաբանական գիտական հիմնավորում, անհամոզիչ էին: Գրողների միության քարտուղար Ա. Ափինյանը առաջարկեց հարցը քննարկել սփյուռքահայ գրողների հետ համատեղ:

Քննարկումն ամփոփեց ՀՀ ԳԱԱ լեզվաբանության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Գ. Զահուկյանը:

Գիտաժողովը հանգեցրեց հետևյալ եզրակացության.

1. Նոր ուղղագրությունը ինչ-որ մեկ կամ երկու անհաղթի (Մ. Աբեղյանի կամ Մ. Աբելյանի և Պ. Մակինյանի) կամ թեկուղ այն ժամանակվա կառավարության (Քբուշեհյան) նախաձեռնությամբ չէր, որ կյանքի կոչվեց, այն պատմական անհրաժեշտություն էր՝ թելադրված մեր լեզվի զարգացման ներքին օրինաչափություններով:

2. Նոր ուղղագրությունը իր հիմնական սկզբունքներով սերում է մաշտոցյան ուղղագրությունից, էությունային է և լիապես համապատասխանում է ժամանակակից հայերենի հնչյունական համակարգին:

3. Այն առավելագույնս մատչելի է ուսուցման համար, դյուրին կերպով կարող է յուրացվել ինչպես արևմտահայերի, այնպես էլ օտարների կողմից:

4. Ժամանակակից ուղղագրությունը հնարավորություն է տալիս առանց որևէ աղավաղման և ընթերցման դժվարություններ առաջացնելու տառադրված օտարազգի բառերը, այդ թվում բոլոր կարգի հատուկ անունները, մինչդեռ այդ առումով հին ուղղագրությունը անհաղթահարելի դժվարություններ է հարուցում:

5. Գիտական, քաղաքական, առավել ևս իրավիճակային (կոնյունկտուրային) ոչ մի հիմք չկա կատարելու հետադարձ բարեփոխություն: Դա կլինի հակապատմական, հակագիտական, ժամանակավրեպ մի ձեռնարկում, բոլոր էություն՝ բռնարարը, որ կարող է ունենալ աղետալի հետևանքներ. կստեղծվի մի այնպիսի շփոթ, քաոս, որը կարգավորել չի լինի:

6. Հին ուղղագրությանը վերադառնալը անհնարին է նաև ուսուցողական ու նյութական առումներով. ինչպես և ինչպիսի՞ ժամանակահատվածում պետք է վերապատրաստել այդքան ուսուցիչներ և երկրի՝ տնտեսական տեսակետից այս ծանր վիճակում վերահրատարակել վերջին 70 տարում տպագրված հսկայածավալ դրականությունը, որը թերևս շատ ավելի է, քան նախորդ բոլոր դարերից մեղ հասածը՝ միասին վերցրած:

7. Արմատապես սխալ ու անընդունելի է հին ուղղագրությանը վերադառնալը գիտելի՞ իբրև մեր լեզվի երկու տարբերակների միասնականացման, դրանով իսկ՝ իբրև թե՛ ազգային միասնության, խորհրդանիշ: Արևելյան ուղիսարհաբարի ուղղագրության փոփոխությամբ ո՞չ լեզվի միասնականության հարց կլուծվի և ո՞չ էլ ազգային միասնության: Լեզուների (կամ լեզվի տար-

րերակներին) միավորումից (խաչավորումից) նոր լեզու (նոր տարբերակ) չի կարող գոյանալ:

8. Արևելահայերենի ուղղագրության փոփոխությունը չի կարող կանխել օտարություն մեջ ապրող հայերի ուժացումը: Այս երևույթի արմատները շատ ավելի խորն են, քան կարծվում է: Ուժադուր հաստակական-պատմական, տնտեսական ու քաղաքական, հիմքեր ունի. միամտություն է Մայր հայրենիքում գործող ուղղագրության հետ այն կտսելը:

9. Ուղղադրական գործերը լրջորեն չի խոչընդոտում արևելահայ ընթերցողին հաղորդակիվելու արևմտահայ լեզվով և հին ուղղագրությամբ գրված որական-մշակութային, արժեքներին: Ճիշտ ալոպես՝ նաև արևմտահայ ընթերցողը կարող է հաղորդակիվել արևելահայերենով և նոր ուղղագրությամբ գրված գրական-մշակութային ողջ ժառանգությանը, ինչպես որ եղել է մինչև այժմ: Արևմտահայ գրողների գրքերը (նոր ուղղագրությամբ) Հայաստանում լույս են տեսել յատ հաճախ, բազմազգար տպառանակով և արևելահայ ընթերցողը սիրով է եռոտում, յուրադնում, անգիր անում դրանք: Արևելահայ նշանավոր գրողների երկերը բնավ էլ խորթ չեն սփյուռքի դպրոցականներին, հայերեն իմացող սփյուռքահայությանը:

10. Պետք է փրանայել «Հայաստանի Հանրապետության սահմանադրության» այն կետը, որը վերաբերում է Հայաստանի Հանրապետության պետական լեզվին: Անհրաժեշտ է հիշել ու միանշանակ սահմանել, որ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն արդի գրական արևելահայերենն է՝ արդի ուղղագրությամբ (որով գրված լինի հանրապետության սահմանադրությունը և ըստ օրենքների) և ոչ թե ընդհանրապես հայերենը՝ երբ որ արտահայտություններով (դրաբար, մեջին հայերեն, արևմտահայերեն, արևելահայերեն, բարբառներ, խոսվածքներ), ինչպես փորձում են մեկնաբանել ոմանք:

11. Անհրաժեշտ է հանել լեզվի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի այն կետը, որտեղ ասված է, թե «Հայաստանի Հանրապետությունը նպաստում է հայերենի ուղղագրության միասնականացմանը»: Այս ձևափոխմամբ սողանք է թողնվում թուր մեկնությունների համար, գիտական հարցը քաղաքականացվում է, դառնում քաղաքական շահարկման առարկա: Հարցը վերաբերում է ավելի շուտ երկու գրական լեզվի մշակման սկզբունքների միասնականացմանը:

12. Գործող և պետականորեն հաստատված ուղղագրությունը, ինչպես այս տարածքում գործող պետական հին ու նոր մյուս բոլոր օրենքները, պարտադիր է Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող ողջ հայության համար:

13. «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթի խորագիրը դրել գործող ուղղագրությամբ:

14. Հայաստանի Հանրապետությունում, բառի ժամանակակից հայերենով գրված որևէ բնագրի՝ պետականորեն գործող ուղղագրությունից այլ ուղղագրությամբ տպագրելը պետական օրենքի, դրանով իսկ՝ մարդու իրավունքները խախտում է, այս պարագայում՝ ողջ հայաստանաբնակ հայերի իրավունքների խախտում, որի կանխումը ՀՀ կառավարության առջև լիզվի պետական տեսչության պարտականությունն է:

15. Արևելահայ և արևմտահայ գրական լեզուները կողք-կողքի դրսևելով են, և սփյուռքում արևմտահայերենով հրատարակությունները բնականորեն կշարունակվեն լույս տեսնել հին ուղղագրությամբ: Մայր հայրենիքի դպրոցներում և բուհերում վաղուց ի վեր սկսվել է արևմտահայերենի ուսուցումը: Ցանկալի է, որ սփյուռքի դպրոցները հետևեն այդ քայլին: Սփյուռքի և Հայաստանի մտավորականության միասնական ջանքերով պետք է հասնել նախ՝ արևմտահայերենի ուղղագրության միասնականության (որ, ցավոք, չկա), ապա՝ փորձել քոռ փոփոխություններով հնարավորին չափ այն մո-

տեղնել անկախ պետականություն ունեցող մայր հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության պետական լեզվի ուղղագրությունը, որով գրում է հայության բազմաթիվ մեծամասնությունը, ի վերջո, այստեղ է հոգը, հայրենիքը, պետականությունը, դպրոցը, բուհը, այստեղ է հիմքը և զխավոր պայմանը մեր ժողովրդի ու նրա մշակույթի հարատևության:

16. Գիտաժողովի եզրակացությունը հրապարակել մամուլում և ուղարկել Հայաստանի Հանրապետության նախագահին, Ազգային ժողովի նախագահին, վարչապետին և լեզվի պետական տեսչությանը՝ ակնկալելով տեղական միջամտություն:

ԵՊՀ ՐԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՅՈՒՄՆԵՐ

ՀՀ ԳԱԱ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՌՈՊԵՐ ԺՆՊՆՃՅԱՆ (Հալեպ)

ՀԵՁԱԿԱՆ ՈՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՓՐԿԱՐԱՐ ՊԵՏԻ ԸՂԼԱ ՍՆՓԱԿԱՆ ԳԻՐԵՆ ՀԵՌԱՑԱԾ
ՍԳՅՈՒՄՈՒՆՆՈՐ ՍՆՐՈՒՆԴԻ ՀԱՄԱՐ*

XIX դարու առաջին կեսին ռամիկ հայու լեզուն տարափոխված, շեղ-տակի հեռացած էր գրաբարեն: Նախկին գրական լեզուն գաղթած էր հոսկր-նալի ըլլալի հասարակ ժողովուրդի համար: Ժամը հնչած էր բարեփոխման՝ ղրավոր գործածության անցնելու ընթացիկ դարձած աշխարհարարը:

Հանդուգն այդ քայլը առավ խառնուրդ Աբովյան՝ սկսելով գրել ժողովուրդին հասկանալի լեզվով: Հայ ժողովուրդը խորին երախտագիտությամբ կը վերհիշե զինք իբր հայ լեզվի բարեկարգիչ:

Արդ, անցյալ դարու վերջերուն, երբ արմատացած էր նոր լեզվի ղրավոր արտահայտությունը ու գրաբարը գործածութենե դադարած, կը հայտնվեք այլ լեզվական պրոբլեմ, իմա՝ ուղղագրական հարց:

Մեսրոպի օրին գործածած լեզվի հնչաբանությունը գարեբու ընթացքին կրած էր այնպիսի փոփոխություններ, որ իր հնարած հնչաբանական այբուբենը, որն այնքան հեշտությամբ ստրկված էին աշակերտները V դարու սկզբներուն, այլևս կորսնցուցած էր մեսրոպյան սկզբունքը՝ «մեկ ղիր յուրաքանչյուր հնչյունի»: Այդ պատճառով ալ հատկապես բարդացած էր հայերենի ուղղագրությունը: Այս պարագային ալ ահա հասունցած էին օրերը ուղղագրական բարեփոխություն կատարելու, վերադառնալով հայոց «զակիորեն անթերի հնչական այբուբենի արարչին սկզբունքին»:

Այդ ուղղագրությամբ, թեև վեհերուտ, ձայներ սկսան բարձրանալ XIX դարու վերջերուն: Հանդուգն քայլը կը պարտինք Մանուկ Աբեղյանին, որը հարցը ձեռք կառնել 1911-են սկսյալ: Նրա առաջարկած բարեփոխության կիրարկումը կը զուգահեռվեր հայ ժողովրդի ամենատաղնապալի մեկ շրջանին: 1915-ի ցեղասպանությունն էտք հայությունը պահ մը ապրեցավ խաբուսիկ երազներով: Նախքան անկախությունը և անկե ետք ալ, ենթակա էր ան թուրք հորդանքու մահասփյուռ անվերջ ներխուժումներուն:

Խորհրդային վարչակարգը կուղար վերջ տալու անոնց: Բայց երկրի ղեկը ձեռք առնելով՝ խաղաղությունը հազիվ հաստատած, այն հանկարծ ինքզինք կը գտնեք դեմ: Հանդիման վիթխարի դժվարություններու առջև՝ իրարահաջորդ ընդհարումներեն հյուծված, սովահար ժողովուրդ, մեծաքանակ թափառական անտեր դաղթականություն, ահավոր համաճարակներու ենթակա, իսկ բոլորի մոտ՝ լայնատարած անգրագիտություն:

* Սփյուռքահայ ականավոր գործիչ, մտավորական Ռոպեր Ճեպեռյանի սույն հոդվածը արտատպում ենք «Հայաստան» թերթի 1998 թ. հունիսի 11-ի համարից. խմբ.:

Առաջնահերթ պայման էր անդրադիտության դեմ պայքարը: Կ'ականկալվելու, որ անոր վերացումը մեծապես պիտի սատարեր տիրող դժնդակ պայմաններին դուրս գալու համար ձեռք առնվելիք միջոցառումներուն: Կասկածիյ դուրս էր, որ «հնչունական ուղղագրութիւն մը» հատկապես պիտի դուրացներ ընթերցանության ուսուցումը զանգվածներուն մոտ: Այլ զդալի դարձած էր, թե հր ապոգեին հասած էր ուղղագրութիւնը բարեփոխելու պահանջը: Ուստի կանխավ խորհրդային Հայաստանի կառավարութիւնը նկատի կառնեւ Մանուկ Աբեղյանի առաջադրանքը ուղղագրության մասին, որը այլ բան չէր, քան ոչ վերահաստատումը մաշտոցյան հնչական այբուբենին՝ աշխարհաբար նոր լեզվի գրավոր արտահայտության համար: Նոր ուղղագրության ողորդում ման մասին կառավարական որոշումը պարտագրելով՝ օրվա յուսթոգկոմ Աւքանազ Մուսկյան (1923.—1929) կրցավ անդրադիտութիւնը ջնջել Հայաստանի տարածքին մի քանի տարիներու ընթացքին: Ազգային տարրագրութիւն ունեւող այդ մեկ նվաճումը առանձին բավ է, որ մենք արժանի տեղ տանք Մ. Արեգլանին խաշատուր Աբովյանի կողքին՝ որպէս բարեկարգիչ գրավոր հայերենի:

Ի միտ ունենաք այդ հաստատումը, երբ հաջորդ տողերուն խոսքը դառնա ներկա սփյուռքի հանդիպած դժվարութիւններուն մայրենին պահպանելու համար:

Նոր ուղղագրութիւն 76-ումյա տրածութիւնը պետական մակարդակով փաստեց, որ այն անհամեմատ ավելի է դյուրին յորացնելու համար: Անոր օգտագործումով լույս տեսած է վիթխարի քանակով հին ու նոր գրականութիւն, վերատպւած ողջ մեր մատենագրութիւնը, գիտական բարդ նվաճումները, թարգմանութիւն, գեղարվեստական հարուստ դրականութիւն, պոեզիա, հանրագիտարան և այլն: Հսկա այդ պաշարը կը գերադանցն հայերեն նախորդ ողջ տպագրված գրականության տպաքանակը:

Նոր ուղղագրության հակառակորդներուն ներկայացրած բոլոր առարկութիւններուն անհիմն ըլլալու մասին արտահայտված են մեծ խորագոյն լեզվաբանները: Մենք պիտի խուսափինք զանոնք կրկնելու: Վեո պիտի առնինք թեև բարեմիտ այն ընդդիմադիրներու առաջ քաշած տեսակետը միայն, թե հինին դառնալով մենք վերահաստատած կրկնաբաղդային միասնական ուղղագրութիւն: Արժե նկատի առնել այդ մեկ փաստակը լոջորեն: Թեպետ ան բնավ չի նշանակեր, որ այդպեսով կը մոտենան լեզվի երկու բաժանումները:

Այժմ պահ մը նկատի ունենանք նախկին ուղղագրության անդնելու առաջարկը՝ միասնական ուղղագրութիւն ունենալու սիրույն: Բայց և գործի շանդած, եկե՛ք ընենք, թե ի՞նչ է կացութիւնը արտաշխարհի մեջ, որուն կառաջարկվի միանալ:

Հին ուղղագրության հայերենի պաշտպանները այն համոզումն ունին, որ արտասահմանի մեջ նյութին ձեռնհաս բոլոր անձինք միահամուռ կողմնակից են. որ անհրաժեշտ է հին ուղղագրութիւնը վերականգնել Հայաստանի մեջ: Սա շատ հեռու է ճշմարտութենէն: Մեր մոտ այդ տեսակետը պրնդողներուն մեծամասնութիւնը կը խոսին «մաշտոցյան ուղղագրության վեոադառնալու մասին»: Այդ կը բավե փաստելու, որ իրենց կը պակսի առարկայական (դիտական) մոտեցում. կը շարժին ենթադրական, զգայական մղումներե տարված: Այլ խոսինք «սովորողներու» մասին, որոնք պաշտպան կը կանգնին հինին, քանի որ այդ միայն սովորած են: Անոնց կոգքին, սակայն, կան մտածողներ, նյութին մոտեցողներ առարկայական բանականութիւնով: Ասոնք ավելի շրջահայաց ու հեռատես, կարող են պատկերացնել նման քայլի մը հետեւի բնական արդիւնքները, ինչպէս նաև զնահաւտել դանոնք՝ մեկնելով ազգային շահերէն:

Այսքան սփյուռք ապրող մասնավորներու մասին՝ ի դիտութիւն հայրենի դերխանդավառ ընդդիմադիրներուն:

Բաղի հիշածներեն, հին ուղղագրության հայոցնի պաշտպաններուն մոտ և ուրիշ այն կառծիրը, թե սփյուռքի տարածքին, դեռ առկա է հին ուղղագրության քաջածանոթ ու դաւն լայնորեն դործածող սերունդ: Այստեղ է, որ շատաւար կո սխալին հայրենիքի մեջ նոր ուղղագրության դեմ ձայն բարձրադնող այրեր: Այդ կառծիրը փոքր-ինչ ավելի մոտ էո իրականությանը ավելի օրան կեա ոար առաջ: Բայց կաղութլուներ հիմնովին փոխված է տարիներու թավալումով:

ԱՄՆ-ի մեջ ներկայիս դուադած է արտասահմանի մեր խոշորագույն սաղութը, մոտ մեկ միլիոն շունչ, լայնորեն սփռված երկրե հսկա տարածքին: Խոշորագույն արդ հայ հավաքականության համար կան մատի վուս հարվվող ամենօրյա հակակաւն ոսլողներ: Տան մեջ կր տիրապետե անդլեոեն լեզուն՝ քիչ քաղաղութլուններով: Դպրոցի հատագիրը, ամրողութլամբ առած, անգլեոեն է, շաքաթը ընոամենը մի քանի ժամերով՝ հարեոենեն հատկացված: Աշակերտներու մեծամասնութլուներ մարեինին եր սորմին համարյա որպես օտար լեզու: Դժվարավ կարտահատմին հարեոենով: Զբոսանքին անգլերենի կը դառնա խոսակցութլունը ինքնաբերաբար: Գալով ուղղագրության, հուսահատական է ւղատկերը նոր սերունդի պառասալին: Ոչ հնչյունալին ուղղագրության յուրադումը հատկասես տաժանելի կը թվի անոնց համար: Իսկ Հայաստանեն փոխադրված տարրեր արդեն վարժ նոր ուղղագրության, պատճառ չեն տեսներ հիւին դառնալու:

Ավելի անմխիթար է կացութլուներ ֆրանսահայ գաղութի մոտ (400.000 շունչ): Քիչ են սերունդի անդամներ, որոնք մաքուր հայերեն կրնան խոսիլ: Ո՞ր մնաց գրելը և ուղղագրութլուներ:

Այդ է վիճակը արտաշխարհի երկու միլիոն հայության 75 տոկոսի մոտ (մեկ ու կես միլիոն): Մնացյալ կես միլիոնը կը բաղկանա համեմատաբար ավելի փոքր ոագութներե, որոնցմե ոմանք, արդե՛ն արմատներեն հեռացած, տարրալուծումե մեջ են (Հունաստան, Եգիպտոս, Թուրքիա և այլն): Արդենտինա և Բրազիլիա նոր սերունդը (հսայանախոս) կը կոչվի «ծագումով հայ»:

Մեծամոր Արեւելի մեջ ավելի մխիթարական է հալ գագութներու վիճակը: Լիբանանի և Սուրիո մեջ (80.000 և 60.000) նշված կաղոմ տակավին ուրծածութլան մեջ է կենդանի լեզուն: Բայց և այնպես, անհամեմատ տուժած է ուղղագրութլուներ աշակերտութլան մոտ: Սուրիահայ դպրոցականը շաղարութլան մեկ էջի վրա թույլ կուտա մի քանի տասնյակ ուղղագրական սխալներ: Հնչական ըլլալե դագրած հին ուղղագրութլունն է, որ պատճառ կդառնա անոնց մեծամասնութլան:

Ահավասիկ համառոտ պատկերը գրավոր հայերենի արտաքին սփյուռքի տարածքին: Այստեղ ճնշող մեծամասնութլուներ հեռացած է մայրենիեն: Եթե պատահի, որ մաս մը ցանկութլուն ունենա հայերեն գրել սովորելու, անոնց դլուրութլուն պիտի ընծայեր մանավանդ հնչական Արեղյան ուղղագրութլուներ: Ընդհակառակը, հին, քարդացած ուղղագրութլան պարտադրանքը զիրենք պիտի հուսալբեն անպայման:

Պարզ է, թե Հայաստանի մեջ հին ուղղագրութլան ջատագովներ ինչ պիտի գտնեն արտաքին սփյուռքի մեջ՝ մահամերձ հին ուղղագրութլուն մը: Իսկ ի՞նչ կը խոստանա իրենց որոնած քալը հայրենի բնակլութլան՝ լայնատարած նոր անգրագլութլուն, որ քառս պիտի ստեղծեր: Հինին վերադառնալը ոչ միտլն կործանիչ սնդրադարձ պիտի ունենար հայրենի դպրութլան (միթթե ցարդ եղածները շէին բավեր), ալ իսկական աղետ, հատկապես նախկին եորհրդային Միութլան տարածքին ուղծագած 2 միլիոն շունչ հաշվող հայ գաղութներուն, որոնց կարեոր մեկ մասը Հայաստաննի վերջերս դուրս եկած, հեսւեաբար նոր ուղղագրութլան վարժ, իրենց գրաճանաչութլունն ալ պիտի և ուղղեն:

Մուայլ այդ պատկերը դեմ հանդիման, եթե Արեղյանի հնչական ուղղագրութլուներ ընդունվեր նաև արտաքին սփյուռքի մեջ, փրկարար պիտի ըլլար

այնտեղ վերջալույսին մոտեցող հայ դպրությանը, Հին ուղղագրության բար-
դություններում այդքան դժվարությամբ հետևող փոքրաթիվ աշակերտու-
թյունն այժմ Մերձավոր Արևելքում, հանկարծ պիտի գտներ, որ հատկապես
հեշտացած է իր մայրենի լեզվի ուղղագրությունը:

Այս բոլորի յուրի տակ, ուրեմն, արժե՞ արդյոք հնչական նոր ուղղա-
գրութենն հրաժարի: Ընդհանուր մեջ՝ սփյուռքի հետ նույն ուղղագրու-
թյունն ունենալու պատրանքով, ներկա սփյուռք, ուր հին ուղղագրության
ուսուցումը կը հանդիպի բազմաթիվ դժվարություններու:

Մենք կը խորհինք, որ ազգային գոյատևման տեսակետէ մեկնած, ավե-
լի շահավետ ու հիշատակաւ լի լիար Արեւելան հնչական ուղղագրութիւնը
յեզրել սփյուռքի մեջ, քան թէ Մաշտոցի սկզբունքն յեղծած դժվարին հին
ուղղագրութիւնը պարտադրել հայրենիքի մեջ՝ անհիմն ու անարտաբանաւ
պատճառաւորութիւններով: Առ ինչպէս հասած կրօնական մեկ ժողովուրդ մեկ
ուղղագրութիւնն նպատակակետին, միանգամայն հեշտացուած լիար լի
յեզրել սփյուռքի յիշած երիտասարդի ջանքերը հիշածովոյ սփյուռքի մեջ:

Եզրակացութիւն:

Փոխանակ Հայաստանի մեջ հին ուղղագրության անցնելու առաջարկին,
անգամներ ավելի առաւելութիւն ունինք, որ նոր ուղղագրութիւնը որդեգրվի
ողջ հայության կողմէ: Պարսկաստանի մեջ ապրող 150.000 հայութիւնը,
այսպիսով ինքիւնք պիտի գտնիր հանկարծ նույնացած հայերենի բնակչու-
թյան հետ և՛ բանավոր, և՛ գրավոր հայերենի արտահայտութեամբ: